ԲՅՈՒԼԵՏԵՆ

Փետրվար 2026թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Փետրվարին գումարվել է Պալատի խորհրդի **2 նիստ՝ 12.02.2026թ.-ին և 25.02.2026թ.-ին:**

12.02.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 5 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատին անդամակցելու համար դիմած կազմակերպությանը Պալատի անդամակցությունը մերժելու, Պալատի անդամ աուդիտորական կազմակերպության նկատմամբ ԿՊՄ կիրառելու, Պալատի հաշվապահական հաշվառման հանձնաժողովի 2025թ.տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին որոշումները:

25.02.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձին Պալատի անդամ ընդունելու, Պալատի փորձագետ հաշվապահ անդամի անդամակցությունը դադարեցնելու և որպես աուդիտոր անդամ ընդունելու, Պալատի 20.10.23թ. N85-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Պալատի 2026թ. բյուջեն հաստատելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է **1 նիստ՝ 25.02.2025թ.-ին,** որում աուդիտորի որակավորում է շնորհվել 1(մեկ) անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է **2 նիստ 04.02.2026թ.-ին և 19.02.2026թ.-ին** , որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 2 (երկու) ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

17.02.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին նոր օրենքի և դրան առնչվող օրենքների փոփոխությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Անուշ Միքայելյանը:**

19.02.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորում և եզրակացության պատրաստում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Մարինա Ենգիբարյանը:**



20.02.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «ՓՄԿ ՖՀՄՍ առանձնահատկությունները՝ ներառյալ 2025թ.-ի փոփոխությունները և ՖՀՄՍ 19 – Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերությունների բացահայտումները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը:**



26.02.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Տրանսֆերային գնագոյացում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**



ՀԱԵԽ նիստ

2**026թ. փետրվարի 24-ին** տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը: Նիստը նախագահում էր Պալատի խորհդի անդամ, ՀԱԵԽ նախագահ Թաթուլ Մովսիսյանը: Նիստի ընթացքում հաստատվեցին ՀԱԵԽ 2025թ. գործունեությունը, հանձնաժողովների 2025 թվականի տարեկան գործունեության, Կրթության հանձնաժողովի անհատական կազմի փոփոխության վերաբերյալ որոշումները: ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էին նաև Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը և Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահ Ավետիք Մովսիսյանը:

ԵԱՏՄ աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստ

2026թ. փետրվարի 19-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստը: Օրակարգում աուդիտորական գործունեության որակի հսկողության հանձնաժողովի 2026 թվականի աշխատանքային ծրագրին, ԵԱՏՄ ԱԽՄ նախագահության անհատական կազմին և նախագահի հաստատմանը վերաբերող հարցերն էին: Քննարկված հարցերի վերաբերյալ կայացվեցին համապատասխան որոշումներ: Նիստին մասնակցում էին ՀԱԵԽ նախագահ, Պալատի խորհրդի անդամ Թաթուլ Մովսիսյանը, Պալատի խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանը և Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:

Որակավորման քննությունների ամփոփում

2**026թ. հունվարի 26-ից մինչև փետրվարի 5-ը** տեղի ունեցան Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի ձմեռային քննաշրջանի քննությունները: Արձանագրվել է **943 մասնակից,** որը գերազանցել է նախորդ տարիների բոլոր ցուցանիշները: